Արձանագրություն N 4
«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/6» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սպիտակ

11.03.2019թ.
ժ. 12:00

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Համբարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Միրզոյան, Ն. Յարմալոյան,

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Ավետիսյան

Ընդունել ի գիտություն, որ 04.03.2019թ.-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացրած հարցման վերաբերյալ 07.03.2019թ.-ին տրամադրվել է տեղեկատվություն, որի համաձայն ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից «ԱՐԱՄԱՆ ՍԹՈՈՒՆ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 6193 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, ինչը չի գերազանցում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված թույլատրելի շեմը:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել «ԱՐԱՄԱՆ ՍԹՈՈՒՆ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ին:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 12.03.2019թ.-ից մինչև 16.03.2019թ.:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Անգործության ժամկետի ավարտից հետո «ԱՐԱՄԱՆ ՍԹՈՈՒՆ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ին ծանուցել՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում և կնքել Սպիտակ համայնքի անձրևաջրատար առուների անցումների մետաղական ճաղավանդակների փոխարինման աշխատանքների կատարման գնման պայմանագիր:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լ. Համբարյան

Անդամներ՝ _____ Հ. Միրզոյան